ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/276

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 28.10.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.10.2021թ. թիվ 26/26-1/17515-2021 գրությամբ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 19.10.2021թ. թիվ 02/16.4/9549-2021 գրության հիման վրա, 26.10.2021թ. թիվ 26/26-1/17515-2021 գրությամբ նախաձեռնել է «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.11.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 08.10.2021թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես, արձանագրվել է հետևյալը.

ա/ Հավելված 1-ում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել սահմանված ձևաչափին համապատասխան:

բ/ Հայտով, որպես որպես որակի տեխնիկական հսկիչ ներկայացված Մ.Մաթևոսյանի փոխարեն անհրաժեշտ է առաջարկել այլ մասնագետ, քանի որ վերջինս ներգրավված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող այլ շինարարական ծրագրում:

գ/ Մասնակցի կողմից չի ներկայացվել լաբորատորո փորձարկման գրաֆիկը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են թերի՝ Հավելված 1.1-ում նշված ծածկագիրը չի համապատասխանում հրավերով նշված գնման առարկայի ծածկագրին…:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց:

- Իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստիարձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության համաձայն՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհմապատասխանություններ, որն էլ հիմք ընդունելով՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում անհմապատասխանությունները շտկվել են թերի, մասնավորապես.

ա/ Հավելված 1.1-ում նշված ծածկագիրը չի համապատասխանում հրավերով նշված գնման առարկայի ծածկագրին:

բ/ Որպես ճարտարագետ-շինարար ներկայացված Ռուբեն Ադամյանի հրավերով պահանջված երեք տարվա համապատասխան ոլորտի տեխնիկական հսկողության աշխատանքային փորձի վերաբերյալ ներկայացրած տեղեկատվության մեջ բացակայում է օբյեկտների մեկնարկի և ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը:

Այնուհետև այս հիմքով նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մասնավորապես արձանագրվել էր, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում՝ Հավելված 1-ում, բացակայել է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, որպես որակի տեխնիկական հսկիչ ներկայացված մասնագետի փոխարեն՝ անհրաժեշտ է առաջարկել այլ մասնագետի և չի ներկայացվել լաբորատոր փորձարկումների գրաֆիկը:

Ի կատարումն վերը նշվածի՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են բոլոր շտկումները, մասնավորապես՝ ներկայացվել է նոր որակի տեխնիկական հսկիչ՝ ի դեմս

Ռուբեն Ադամյանի, ներկայացվել է լաբորատոր փորձարկումների գրաֆիկը և ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

Սակայն գնահատող հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Հավելված 1.1-ի նշված ծածկագիրը չի համապատասխանում մրցույթի գնման առարակայի ծածկագրին և որպես տեխնիկական հսկողության ոլորտի շրջանակներում՝ ներկայացված հսկիչի կատարած աշխատանքները անհնար է գնահատել, քանի որ վերջինիս վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մեջ բացակայում է մեկնարկի և ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը:

Գտնում ենք, որ գնահատող հանձանաժողովի կողմից թույլ են տրվել մի շարք խախռումներ, որոնք իրենց համակցության մեջ չեն կարող գնահատվել որպես «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում հետևյալ հիմնավորմամբ.

1. Ինչպես արդեն նշել ենք, որպես թերություն գնահատող հանձնաժողովը արձագարել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում՝ Հավելված 1-ում, բացակայել է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Իրոք, ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած Հավելված 1-ի հետևյալ հատվածում՝

Ստորև ներկայացնում է -ի իրական շահառուների վերաբերյալ

մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ ----------**

չի նշվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

Ընկերությունը սահմանված կարգով շտկել է Հավելված 1-ը և ներկայացրել այն գնահատող հանձնաժողովին: Այնուհետև այս մասով չարձանագրելով որևէ խխտում, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության ներկայացրած հավելված 1.1-ում սխալ է նշված Ընթացակարգի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ՍՊԸ-ն ի սկզբանե հայտով չի ներկայացրել Հավելված 1.1-ը: Հավելված 1.1-ի մասով գնահատող հանձնաժողովը չի ներկայացրել որևէ շտկման պահանջ և նման պարագայում, ըստ էության, «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն չի կրել պարտականություն ներկայացնելու Հավելված 1.1-ը՝ նման պահանջ գնահատող հանձնաժողովի կողմից իրեն չներկայացնելու պարագայում: Ուստի Հավելված 1.1-ում թույլ տված սխալը չի կարող դիտարկվել որպես պահանջված շտկումը չկատարելը /թերի շտկելը/: Բացի այդ գտնում ենք, որ եթե բոլոր փաստաթղթերում, այդ թվում նաև

Ընթացակարգին մասնակցության դիմումում ճիշտ նշված է Ընթացակարգի ծածկագիրը, միայն Հավելված 1.1-ում թույլ տված ծածկագրի սխալը հայտը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ /վերոհիշյալ հարցի կապացությամբ ներկայացրած բազմաթիվ բողոքներով բողոքներ քննող ածինք կայացրած որոշումներով հայտնել են իրենց դիրքորոշումը/:

2. Գտնում ենք, որ հիմնավոր չէ գնահատող հանձնաժողովի պահանջված շտկումը հայտով, որպես որպես որակի տեխնիկական հսկիչ ներկայացված Մ.Մաթևոսյանի փոխարեն այլ մասնագետ առաջարկելու վերաբերյալ, քանի որ, ըստ գնահատող հանձնաժողովի, վերջինս ներգրավված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող այլ շինարարական ծրագրում:

Գտնում ենք, որ մասնագետի այլ աշխատանքում ներգրավված լինելը չի զրկում վերջինիս իր պարտականությունները այս Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեպքում իրականացնելու հնարավորությունից:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ անգամ եթե «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն չներկայացներ որակի տեխնիկական հսկիչ մասնագետ, ապա վերոհիշյալը ըստ Ընթացակարգի հրավերի՝ ոչ թե հայտը մերժելու, այլ վերջինի կողմից հավաքվելիք միավորները նվազեցնելու հիմք էր, բայց որ հայտը մերժելու հիմք:

Մասնավորապես, ըստ Ընթացակարգի հրավերի՝

2.1	Աշխատակազմ (ՏԱ1)***	40 միավոր	ՄԱՍՆԱԿՑԻ աշխատակազմում ներգրավված մասնագիտական ռեսուրսի փորձառությունը և որակավորումը գնահատվում է որակավորումը հավաստող փաստաթղթերի և հրավերով սահմանված **նմանատիպ** օբյեկտների մասով պատշաճ կատարված աշխատանքների մասին ՄԱՍՆԱԿՑԻ գրավոր հավաստող փաստաթղթերի հիման վրա: Աշխատակազմի գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 25 միավոր: Նվազագույն միավորը ստանում է աշխատանքային ռեսուրսների գնահատման արդյունքում բոլոր մասնագետների հրավերով սահմանված նվազագույն պահանջներին բավարարելու դեպքում: **(այդ թվում լրացվում է սույն հրավերի Հավելված N 1.2-ը)**

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/276 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:15-ին և 11.11.2021թ. ժամը 09:13-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 11.11.2021թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստին, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.10.2021թ. թիվ 02/16.4/9549-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայութան ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈՒՐԳԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/276 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:15-ին և 11.11.2021թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/276 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/276 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2021թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

ա) «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել հրավերով սահմանված ձևաչափին համապատասխան:

բ) Հայտով, որպես որակի տեխնիկական հսկիչ ներկայացված Մ.Մաթևոսյանի փոխարեն անհրաժեշտ է առաջարկել այլ մասնագետի, քանի որ վերջինս ներգրավված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող այլ շինարարական ծրագրում:

գ) Մասնակցի կողմից չի ներկայացվել լաբորատոր փորձարկումների գրաֆիկը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 11.10.2021թ. ներառյալ) շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ում նշված ծածկագիրը չի համապատասխանում հրավերով նշված գնման առարկայի ծածկագրին, որպես ճարտարագետ-շինարար ներկայացված Ռուբեն Ադամյանի հրավերով պահանջվող երեք տարվա համապատասխան ոլորտի տեխնիկական հսկողության աշխատանքային փորձի վերաբերյալ ներկայացված տվյալները հնարավոր չէ գնահատել, քանի որ վերջինիս վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մեջ բացակայում է օբյեկտների մեկնարկի և

ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.10.2021թ. թիվ 26/26-1/17515-2021 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.10.2021թ. թիվ 02/16.4/9549-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ընթացակարգի հրավերի Հավելված N 1.2-ով սահմանվել է, որ կից ներկայացվում է ***<u>յուրաքանչյուր մասնագետի կողմից տեխնիկական հսկողության բնագավառում /որպես Ճարտարագետ-շինարար</u>***, Ճարտարագետ-էներգետիկ, Ճարտարագետ-էլեկտրիկ, Ճարտարագետ-հիդրոտեխնիկ/ ***<u>առանձին օբյեկտների մասով մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը՝ հաստատված հայտը ներկայացնողի կողմից</u>***:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման շինարարական

աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2021թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

ա) «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել հրավերով սահմանված ձևաչափին համապատասխան:

բ) Հայտով, որպես որակի տեխնիկական հսկիչ ներկայացված Մ.Մաթևոսյանի փոխարեն անհրաժեշտ է առաջարկել այլ մասնագետի, քանի որ վերջինս ներգրավված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող այլ շինարարական ծրագրում:

գ) Մասնակցի կողմից չի ներկայացվել լաբորատոր փորձարկումների գրաֆիկը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 11.10.2021թ. ներառյալ) շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ում նշված ծածկագիրը չի համապատասխանում հրավերով նշված գնման առարկայի ծածկագրին, որպես ճարտարագետ-շինարար ներկայացված Ռուբեն Ադամյանի հրավերով պահանջվող երեք տարվա համապատասխան ոլորտի տեխնիկական հսկողության աշխատանքային փորձի վերաբերյալ ներկայացված տվյալները հնարավոր չէ գնահատել, քանի որ վերջինիս վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մեջ բացակայում է օբյեկտների մեկնարկի և ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն որպես շտկում

ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կրկին արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ որպես ճարտարագետ-շինարար ներկայացված Ռուբեն Ադամյանի՝ հրավերով պահանջվող երեք տարվա համապատասխան ոլորտի տեխնիկական հսկողության աշխատանքային փորձի վերաբերյալ ներկայացված տվյալները հնարավոր չի եղել գնահատել, քանի որ վերջինիս վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մեջ բացակայել է օբյեկտների մեկնարկի և ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը, այսինքն՝ Ընկերությունը «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ նշել է հետևյալը.

«Գտնում ենք, որ հիմնավոր չէ գնահատող հանձնաժողովի պահանջված շտկումը հայտով, որպես որակի տեխնիկական հսկիչ ներկայացված Մ. Մաթևոսյանի փոխարեն այլ մասնագետ առաջարկելու վերաբերյալ, քանի որ, ըստ գնահատող հանձնաժողովի, վերջինս ներգրավված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող այլ շինարարական ծրագրում:

Գտնում ենք, որ մասնագետի այլ աշխատանքում ներգրավված լինելը չի զրկում վերջինիս իր պարտականությունները այս Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեպքում իրականացնելու հնարավորությունից:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ անգամ եթե «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն չներկայացներ որակի տեխնիկական հսկիչ մասնագետ, ապա վերոհիշյալը ըստ Ընթացակարգի հրավերի՝ ոչ թե հայտը մերժելու, այլ վերջինի կողմից հավաքվելիք միավորները նվազեցնելու հիմք էր, բայց ոչ հայտը մերժելու հիմք»:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ինչ վերաբերում է մասնագետի այլ աշխատանքում ներգրավված լինելու պայմաններում Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեպքում իր պարտականությունները իրականացնելու հնարավորությանը, ապա գտնում եմ, որ մասնագետի այլ աշխատանքում ներգրավված լինելու պայմաններում վերջինս չէր կարող Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեպքում իր պարտականությունները իրականացնել, քանի որ Ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ով սահմանվել է, որ ***<u>օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական</u>***

<u>հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ:</u>

Անդրադառնալով Ընկերության կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ անգամ եթե «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն չներկայացներ որակի տեխնիկական հսկիչ մասնագետ, ապա վերոհիշյալն ըստ Ընթացակարգի հրավերի՝ ոչ թե հայտը մերժելու, այլ վերջինի կողմից հավաքվելիք միավորները նվազեցնելու հիմք էր, բայց ոչ հայտը մերժելու հիմք, հարկ եմ համարում հայտնել, որ ***<u>Ընթացակարգի հրավերով հստակ սահմանվել է, որ եթե ներկայացված մասնագետներից որևէ մեկի մասով հայտը գնահատվում է սահմանված նվազագույն չեմից ցածր՝ հայտն ամբողջությամբ մերժվում է:</u>*** Միևնույն ժամանակ Ընկերության ներկայացուցչից 11.11.2021թ. հրավիրված նիստի ընթացքում պահանջվել է ներկայացնել նշվածի վերաբերյալ հիմնավորում, որը, սակայն, չի ներկայացվել:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ նշել է նաև, որ Հավելված 1.1-ի մասով գնահատող հանձնաժողովը չի ներկայացրել որևէ շտկման պահանջ, այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ի սկզբանե Ընկերության կողմից ներկայացվել է Հավելված 1-ը միայն, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Հավելված 1-ում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, հետո միայն՝ Հավելված 1-ը շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո, Ընկերությունը ներկայացրել է Հավելված 1.1-ը, որտեղ էլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.10.2021թ. թիվ 26/26-1/17515-2021 գրությամբ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**